

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱՀԱՐԿԸ ԱՐԱՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Ա. Ն. ՏԵՐ-ՎԵՎՈՒՅԱՆ

Հայաստանի արաբական ժամանակաշրջանի հարկերի մասին մեր տեղեկությունները թեև այնքան էլ սակավաթիվ չեն, այնուամենայնիվ բնահարկի մասին ցայժմ միայն մեկ աղբյուրից ստույգ տեղեկություններ ունենք՝ Իբն Խալդունի հարկացուցակից¹։

Իբն Խալդունը (1332—1406) արաբ պատմագրության մեջ միակն է, որը բացի պատմական տեղեկություններ հաղորդելուց, փորձում է տալ պատմության փիլիսոփայությունը, պետությունների զարգացման ու անկման պատճառները։ Իր ծավալուն աշխատության առաջաբանում (Մուկադդիմա) խոսելով այն մասին, թե պետությունների մեծագործությունները հետևանք են նրանց ունեցած տնտեսական հզորության, մեջ է բերում Արբասյան ժամանակաշրջանի մի հարկացուցակ, որտեղ տրված է ոչ միայն զրամական հարկերի չափը, այլև բնահարկը՝ իր տեսակներով ու քանակով։ Ըստ ալս հարկացուցակի Արմինիա ոստիկանությունը՝ Հայաստանը՝ Վրաց ու Աղվանից երկրների հետ, տարեկան վճարում էր «Տասներեք միլիոն դիրհեմ՝ և երկու նվազով, Մահֆուրա դորգեր՝ քսան (հատ), գունազարդ գործվածքեղեն՝ հինգ հարյուր ութսուն դաթ (լիտր), աղած սուրմահի (ծուկ) տաս հազար դաթ, տառեխ՝ տաս հազար դաթ, ջորիներ՝ երկու հարյուր, բաղեններ՝ ևրեսուն»։ Այս արժեքավոր ցուցակը օգտագործել են Ա. Կրեմերը², Մ. Ղազարյանը³ և Հ. Նալբանդյանը⁴։

Հարց է ծագում. ո՞րն է Իբն Խալդունի աղբյուրը և, մանավանդ, ինչքանով կարող ենք վստահել բուն ցուցակի շարադրման շրջանից՝ IX դարի սկզբից մոտավորապես հինգ ու կես դար հետո գրված աշխատության բնագրի հաղադատությանը։

Բարեբախտաբար, 1926 թվականին Լայպցիգում լույս տեսավ X դարի արաբ մատենագիր Ջահշիարիի Վիեննայի Ալգալին զրազարանում պահպանվող և 1151 թվականը կրող, եղակի ձեռագրի լուսանկար վերատպությունը (Ֆաքսիմիլ), որտեղ գտնում ենք վերոհիշյալ հարկացուցակը, որը մեծ չափով կարող է նպաստել Իբն Խալդունի ցուցակը ճշտելու հարցում։ Ջահշիարին (մեռ. 942) ևղել է Ալի Իբն Իսա վեդիրի սենեկապետը, մի պաշտոն, որ նա հորից էր

¹ „Prolegomènes d'Ibn Khaldoun“. Texte arabe publié par M. Quatremère, Paris, 1858, p. 324.

² A. von Kremer, Culturgeschichte des Orients unter den Chalifen, I. Wien, 1875, S. 342—343, 358.

³ M. Ghazarian, Armenien unter der arabischen Herrschaft, Marburg, 1903, S. 68.

⁴ Հ. Նալբանդյան, Արաբների հարկային քաղաքականությունը Հայաստանում, ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), № 12, 1954, էջ 83։

ժառանգել: Մոտիկ լինելով արքունի շրջանակներին, նա իրավեկ անձնավորություն էր: Իր աշխատության մեջ ներկայացրած հարկացուցակը, ըստ նրան կազմված է Հարուն ալ-Ռաշիդի օրերին (785—809):

Ջահիարիի հարկացուցակը չի հակասում Իրն հալոունի տված ցուցակին, այնուամենայնիվ ունի սրտշ հետաքրքրական տարբերություններ: Երկու ցուցակներն էլ նույն թվերն ունեն, սակայն տարբերությունը հարկատեսակներին նկարագրության մեջ է.

«Արմինիա — տասերեք միլիոն դիրհամ,
Մահֆուրա գորդեր՝ քսան հատ,
Գունազարդ գործվածքեղեն՝ հինգ հարյուր ութսուն կտոր,
Աղած մշակված ձուկ՝ տաս հազար ութի (լիտր),
Տառեխ՝ տաս հազար ութի,
Բաղեններ՝ երեսուն հատ,
Ջորիններ՝ երկու հարյուր հատ»:

Ջահիարիի ցուցակը զեռ ձևագիրը վիճակում քննարկել է Ա. Կրեմերը իր մի հոդվածում⁵, որպես խալիֆայության ընդհանուր հարկացուցակ: Ձևագիրը լույս տեսնելուց՝ հետո, թեև անցել է չորս տասնամյակ, այնուամենայնիվ Հայաստանին վերաբերող մասը հալաղատ պատմաբանների ուշադրությունը չի զրավել այն պատճառով, որ արաբներն ձևագրում Արմինիա անվան մեջ երկրորդ 5-ի կետերը հեղուկ թափվելու պատճառով ջնջվել են և թվացել է թե զրված է ոչ թե Արմինիա, այլ Ուրմիա: Այսպես է կարդացել օրինակ Ռ. Լեյն⁶, որն ալս հարկալին ցուցակը անգլերեն է թարգմանել և զետեղել արաբական խալիֆայության ներքին կառուցվածքի մասին դրած իր մենագրության մեջ: Սակայն հենց ձևագրի ընթերցումը անկասկած է դարձնում, որ սա Արմինիա է, և այդպես է կարդացել զեռ Ա. Կրեմերը: Ձևագրում, բարեբախտաբար, 5-ի (ն) կետը չի ջնջվել, ուստի եթե Ռ. Լեյն հետևողական լիներ, պիտի կարդար Արմինա կամ Ուրմինա, բայց ոչ երբեք Ուրմիա (առանց ն-ի): Այս առթիվ նպատակահարմար ենք դառնում սալ սույն ցուցակի ձևագրից վերցրած լուսանկարը:

⁵ D. Sourdel, Le vizirat Abbaside. Damas, 1959, I, p. 8—9.

⁶ „Kitab al-wuzara wa-l-kuttab des Abu Abdallah... al-Ghāsiyari“, MCMXXVI, Leipzig (Bibl. arab. Hist. und geogr., I) 182a.

⁷ A. von Kremer, Über das Budget der Einnahmen unter der Regierung des Harun al-Rasid (Verh. d. VII. Inter. Orient.-Cong.), Wien, 1888, S. 1—18. Ջահիարիի հարկացուցակի տվյալներից մի քանիսը կրկնված ենք գտնում XIV դարի պարսիկ պատմիչ Վասսաֆի Հուլավյան իշխանության պատմության մեջ: Խոսելով հարկերի մասին Վասսաֆի մեջ է բերում մի հարկացուցակ, որտեղ նշված է Աբբասյան ժամանակաշրջանի բնահարկը: Հայաստանի համար հիշվում է ճաղած ձուկ և տառեխ քսան հազար ութի... քսան գորդ... երեսուն բաղեն, որոնք համընկնում են Ջահիարիի ցուցակին և հավանաբար նրանից են քաղված:

⁸ Հ. Մ ժ ի կ ի ձևագրված հրատարակությունից հետո Ջահիարիի դիրքը երկու հրատարակություն է ունեցել Կահիրեում (վերջինը 1938 թ.), բացի այդ, 1964 թ. Բեյրութում լույս են տեսել նրա սրտշ կորած մասերը:

⁹ R. Levy, The social structure of Islam, Cambridge, 1962, p. 319.

أَرْمِي
 مِلْعَسَلَفَ لَفْعَدَه - اللِّسَطُ الْمَحْفُورَةُ عَشْرُونَ سِنًا طَا
 الرَّقْمُ حَمْسًا مِائَتُونَ قَطْعُهُ الْمَلِكُ الْمُنْبُودُ مَا هِيَ
 مَسْرُودٌ لِلزَّرْطَلِ الطَّيْحُ عَشْرَةُ أَلْفٍ مِطْلُ
 الْبُرَّازُ ثَلَاثُونَ بَارِلًا الْغَالُكَ مَا تِنَا بَغْلًا

Հետաքրքրական են այս նոր ցուցակի ունեցած տարբերությունները Իբն Խալդունի ցուցակից: Այս առթիվ անհրաժեշտ է նաև որոշ վերլուծություն կատարել, որը ուսումնասիրողները չեն տվել նույնիսկ Իբն Խալդունի տվյալներն օգտագործելիս:

Տասներեք միլիոն դիրհեմը հավանաբար այն զագագթնակետն է, որին երբևիցե հասել է արաբական Արմինիա նահանգի տարեկան հարկերի քանակը: Առաջին Աբբասյանների ժամանակ, մանավանդ Մանսուրի (754—775) և Հաբուն ալ-Ռաշիդի օրոք, հարկերը աննկարագրելի չափերի էին հասել Հայաստանում: Մանսուրը դեռ փոխարքայության ժամանակ ժողովրդին անասելի չքավորության էր հասցրել, նույնիսկ մեռելների համար նրանց տներինց հարկ պահանջելով: Գլխահարկը ըստ երգի գանձելու փոխարեն՝ ըստ շնչի պահանջելու սկզբունքը այս ժամանակ կիրառվում էլ ամենադաժան ձևով: Հարկերի այս հսկայական գումարը, որի կեսից ավելին, ըստ իր տարածության, բնականաբար, Հայաստանն էր վճարում, երկրում արծաթի ճգնաժամ առաջացրեց¹⁰:

Այս գումարի մեծությունը պատկերացնելու համար հիշենք, որ արաբական տիրապետության թե՛ նախորդ (VIII դարի առաջին կես), թե՛ հաջորդ (IX դարի առաջին կես) շրջաններում Արմինիան վճարել է շատ ավելի քիչ հարկեր: Արաբ աշխարհագետներ Իբն Խորդադեբհի¹¹ և Կուդամաչի¹² տվյալներով Արմինիան IX դարի առաջին կեսում վճարում էր շուրջ չորս միլիոն դիրհեմ:

Սակայն Օմայան ժամանակաշրջանի համեմատությամբ դրամական հարկի քանակի ուճաճումը սոսկ հարկերի բարձրացման հետևանք չէր, այլ, միաժամանակ, արդյունք էր այն բանի, որ ամբողջ հարկադրման մեջ դրամական մասը Աբբասյան ժամանակաշրջանում ավելի մեծ տեղ էր զբաղում: Աբբասյանները կողմնակից էին դրամական կանխիկ հարկերին, իսկ բնահարկը նրանց օրոք երկրորդական նշանակություն ստացավ: Ուստի, պառահական չէ, որ վերոհիշյալ ցուցակում որոշ երկրների անվան դիմաց բնահարկ բոլորովին չի նշանակված:

Աբբասյան շրջանի Հայաստանի բնահարկը նախորդ Օմայան շրջանից տարբերվում էր ոչ միայն նրանով, որ իր տեղը զիջում էր դրամական կանխիկ հարկին, այլև հարկատեսակների մեծ փոփոխությամբ:

¹⁰ Պատմություն Ղևոնդյանի մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, գլ. ԼԳ (էջ 135):

¹¹ „Bibliotheca Geographorum Arabicorum“, VI, 124. Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Հայաստանի վարչական բաժանումները ըստ IX դարի արաբ աշխարհագիրների, «Տեղեկագիր» (հասկ. գիտ.), 1961, № 5, էջ 70—71:

¹² BGA, VI, 249.

Հայաստանի բնահարկի մասին (Օմայանների օրոք) մի հետաքրքրական տեղեկություն ունի Սամվել Անեցին: Ոմն Մահմեդ (ակներևորեն Մուհամմադ իբն Մովան փոխարքան VIII դարի սկզբին) պայմանագիր է կնքում հայոց հետ հետևյալ պայմաններով. «Յամենայն տանէ առեալ Դ դրամ և Գ մոթ խորբալ և ձիատուրակ մի և պարան մի մաղէ և ձեռնարար մի»¹³: Ձիատուրակը, պարանը և ձեռնոցը, օմայանները, ըստ երևույթին, արաբական զորքի կարիքների համար էին վերցնում¹⁴:

Բուն բնահարկը ցորենն էր, որն, ինչպես տեսանք, տրվում էր ամեն տնից երեք մոդ մաղած վիճակում (խորբալ), այսինքն՝ մոտավորապես երկու փութ: Յորենը որպես բնահարկ էր վերցվում նաև Սասանյան ժամանակաշրջանում:

Աբբասյան ժամանակաշրջանում ցորենը (ինչպես նաև ձիատուրակը, պարանն ու ձեռնոցը), որպես բնահարկ, այլևս չի հիշվում, այլ փոխարենը պահանջվում էր հիմնականում՝ ձկնեղեն և զեխության մեջ լողացող Աբբասյան արքունիքի համար պերճանքի առարկաներ:

Ջահշիրիի հարկացուցակում բնահարկի մեջ առաջինը հիշվում է քսան գորդը, որը «մահֆուրա» (مافور) էր կոչվում: Հայկական գորդագործությունը ընդհանրապես կասկած է եղել Կարին քաղաքի հետ¹⁵, որի գորգերն այնքան հուշակված էին, որ ըստ արաբ աշխարհագետ Ֆակուտի¹⁶ վկայության, արևելյան ժողովուրդների մոտ «խալի»՝ գորգ բառը (ներա մոտ الحلي) Կարին քաղաքի արաբական ձևից՝ Կալիկալաից է առաջացել: Ցուցակում հիշված մահֆուրա բառի համար հետաքրքրական մեկնություն է տալիս արաբական միջնադարյան ընդարձակ Կամուս բառարանը, այն համարելով Ռումի (Սև) ծովի վրա գտնվող մի վայրի անուն, ուր գորգեր են պատրաստում¹⁷: Սև ծովի ափին բյուզանդական կամ այլ աղբյուրների մեջ չի հիշվում ոչ մի գորգագործական կենտրոն և մնում է ենթադրել, որ խոսքը Սև ծովի (կամ Տրապիզոնի) հետ սերտորեն կապված Կարին քաղաքի կամ գավառի մասին է: Արաբական այլ բառարաններում նույնպես հիշվում է, որ Մահֆուրը մի քաղաք է, որտեղ գորգեր են հյուսում¹⁸: Ուստի Մահֆուրա պետք է նշանակի մահֆուրյան, այսինքն Մահֆուրում¹⁹ պատրաստված:

Հայաստանում պատրաստվում էին բացառիկ գորգեր, որոնցից մի քանիսի նկարագրությունը գտնում ենք ասորական մի պատանդի մեջ: Այստեղ նշվում է, որ ամիր Աբու Սաջը 911 թ. Մուկտագիր խալիֆային ուղարկեց չորս հարյուր ձի, 30 հազար դինար և 7 գորգ, գորգերից մեկը 60 կանգուն երկարություն և 60 կանգուն լայնություն ունեւ, այդ գորգի վրա աշխատել էին տաս տարի»²⁰:

¹³ Մամուլի քահանայի Անեցոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 82: 2. Մ ա ն ա ն դ յ ա ն, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Բ, Բ մասի նյութեր, Երևան, 1960, էջ 212:

¹⁴ 2. Ն ա լ բ ա ն դ յ ա ն, Արաբների հարկային քաղաքականությունը, էջ 76:

¹⁵ R. E t t i n g h a u s e n, K a l i, Enc. de l'Islam. Supplement, Leiden—Paris, 1938.

¹⁶ „Jacut's Geographisches Wörterbuch“, Leipzig, 1929, IV, 20.

¹⁷ Կամուս ալ-Մուհիթ (Ֆիրուզաբադի), Կահիրե, Բ, էջ 12:

¹⁸ Թաջ ալ-Արուս, Գ, 153:

Ա. Ռիդա, մուլամ մատն ալ-լուղա, Բեյրութ, 1958, Բ, 122:

¹⁹ Մահֆուրա արաբերեն նշանակում է փորված, սակայն այս դեպքում տեղանուն է:

²⁰ H. M a r p, Ани, Ереван, 1939, прим. 165a, стр. 237—238. Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում, էջ 291:

Հայկական գորգերի հոշակը տարածված էր ամբողջ խալիֆայության մեջ: IX դարի արաբ աշխարհագետ Իբն Ռուստան Խսպահանում արտագրված գորգերի մասին խոսելիս հիշում է հայկական ընտիր գորգերը²¹, իսկ X դարում Իբն Ֆազլանը հայկական գորգեր էր տեսել Կամաշի բուլղարների թագավորի ընդարձակ վրանում փռած²²:

Չափազանց հետաքրքրական է բնահարկի մեջ գործվածքների հիշատակումը: Արաբներն ունեին (الترقي) նշանակում է գունավոր զարդարուն կերպասեղեն, որը, հավանաբար, թիկնոցի համար էին պործածում: Ըստ Լերույթին սա համապատասխանում է հայկական աղբյուրների հիշած ոսկեթել ու գունազարդ դիպակին: Որդան կարմրով ներկված այս արժեքավոր կերպասները հետադարձում Բաղրատունի թագավորները նվիրում էին զրացի տիրակալներին²³:

Իբն Խալդունի մոտ ունեւ 580 ռաթլ է նշանակված, իսկ Ջահիարին, թեև նույն թիվն է տալիս, այնուամենայնիվ ռաթլի փոխարեն օգտագործել է «կիթա» (كيط) կտոր լառը, որը արաբ մատենագրության մեջ գործվածքների համար օգտագործվող արտահայտություն է²⁴: Կտոր ասելով հասկանում էին կերպասից կտրած որոշ քանակություն զգեստ կարելու համար: Կարելի է ենթադրել, որ այդ կտորը որոշ դեպքերում մեկ ռաթլ (լիտր) ծանրություն կարող էր ունենալ:

Գորգերի և գործվածքների հիշատակումը խնդրո առարկա սույն ցուցակում մի անգամ ևս վկայում է, որ արաբական ախրապետության ժամանակաշրջանում, և մանավանդ նախորդող VII դարում, արհեստագործության այս երկու ճյուղերը բավական զարգացած էին: Հայտնի է, որ Հայաստանի արհեստների պատմության մեջ և մանավանդ միջնադարյան հայ մատենագրության էջերում ուստայանկության զարգացման մասին վկայող տեղեկությունները հիմնականում Բագրատունյաց ժամանակաշրջանին են վերաբերում: Թեև արաբական տիրապետությունը տնտեսական կյանքի լճացում առաջ բերեց, այնուամենայնիվ VII դարից արդեն գոյություն ունեցող արհեստները չպիտի անհետանային, այլ շարունակեին իրենց գոյությունը առավել ևս զարգանալով: Բագրատունյաց ժամանակաշրջանում:

Ցուցակում, այնուհետև, հիշվում են ձկան երկու տեսակ, որոնցից յուրաքանչյուրը 10 հազարական ռաթլ քանակությամբ էր վերցվում: Ջահիարիի «աղած մշակված ձուկ» المالح المنبوذ ماهی արտահայտության մեջ որոշ դժվարահասկանալի բառեր կան, որով և նա տարբերվում է Իբն Խալդունի ցուցակից: Արաբներն «մանբուզ» բառը սաբիդ (գինի) բառից է, ուստի, զույգ նշանակում է մշակված: Արաբական մատենագրության համար խորթ է նաև «մահի» պարսկերեն բառը, որը ձուկ է նշանակում: Նույն տեղում Իբն Խալդունն ունի սուրմահի (կամ շուրմահի)՝ աղած ձուկ արտահայտությունը, նույնպես պարսկերեն, որը համեմատաբար ծանոթ է արաբ մատենագիրներին:

²¹ BGA, VII, 153.

²² Путешествие Ибн Фадлана на Волгу, М.—Л., 1939, 207a.

²³ Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում, Երևան, 1958, I, 273—274.

²⁴ D o z y, Dictionnaire détaillé des noms des vêtements chez les arabes. Amsterdam, 1845, p. 368 n. 2.

IX դարի աշխարհագետ Իբն ալ-Ֆակիհը հիշում է²⁵, որ Արաբս գետի մեջ կա շուրմահի, որը միայն այստեղ է գտնվում և այն էլ տարվա որոշ եղանակին, ապա ավելացնում է, որ շուրմահին հայտնի է իր համեղ և փափուկ մսով: Արաբ մատենագրի այսպիսի բարձր կարծիքից պարզվում է, թե ինչու խալիֆայությունը մեծ քանակությամբ (10 հազար լիտր) բնահարկ էր վերցնում այս ձկնից:

Ձկների երկրորդ տեսակը տառեխն է, որը առանձնահատուկ հուշակ ունեւր արաբական խալիֆայության մեջ և հենց նույն բառով էլ կոչվում էր (թիռիխ): Վանա լճի այս մանր ձուկը (հարինգ) որսում էին դեռ Արշակունյաց ժամանակաշրջանում: Արքունի ձկնորսարանը՝ «ձկնատեանք արքունի» գտնվում էր Առեստավանում, Առեստ գետի վրա, որտեղ զարնանը բռնում էին այս ձուկը, երբ նա Առեստ գետն էր դիմում ձկնկիթ թափելու, իսկ բռնված տառեխն, ըստ երևույթին, գտնվում էր Արշակունյաց արքունիքի տրամադրության տակ: VII դարի «Աշխարհացույցում» ասված «Առեստավան ուստի ելան է ձուկն» խոսքերը, ըստ Ս. Նրեմյանի, հենց տառեխն են վերաբերում²⁶:

Արշակունյաց անկումից հետո, VII դարում, տառեխի որսը աղատ է եղել Վանա լճում: Արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրը խոսելով VIII դարի սկզբի արաբ փոխարքա Մուհամմադ Իբն Մուլանի մասին, հետևյալ արժեքավոր տեղեկությունն է տալիս. «Իսկ տառեխի լիճը, որը Հայաստանում է [ձկնորսության համար] արտոնված է եղել և ոչ ոք չի արգելել, այլ ամեն մարդ ուղածը որսում էր այնտեղից: Նա (Մուհամմադ Իբն Մուլանը) արգելեց ձկնորսությունը և նշանակեց մեկին, որը պետք է որսար, վաճառեր և վերցնեւր արժեքը: Նրանից հետո անցավ որդուն՝ Մուլանին, իսկ սրանից էլ վերցվեց, երբ տերությունը սրանց ձեռքից առնվեց»²⁷:

Ըստ պատմիչի վկայության, VII դարում, դուցե և ավելի առաջ էլ, ձկնորսությունը Վանա լճի վրա աղատ է եղել, և հենց VIII դարի սկզբից տառեխի որսը դադանում է Օմայյան տան անդամների մենաշնորհը, իսկ 750 թվականից հետո, թեև մնացել է արքունի հսկողության տակ, այնուամենայնիվ որսացված տառեխը մտնում էր բնահարկի մեջ և մեծ քանակությամբ՝ 10 հազար լիտր առաքվում էր Աբբասյան արքունիքը:

Բազրատունյաց ժամանակաշրջանում Վանա լճի տառեխը, դուցե, աղատ վաճառքի առարկա է դարձել, եթե չի ընկել Արծրունիների հսկողության տակ: Ըստ X դարի արաբ աշխարհագետ Իբն Հաուկալի, Վանա լճից «որսում են փոքր թղափա ձուկը, որը կոչվում է թիռիխ, սա աղվում է ու տարվում շատ երկրներ, ինչպես Մոսուլ, Ջաղիրա, Իրաք և Ասորիքի կողմերը»²⁸:

Հայաստանից վերցրած տարեկան 30 բաղեն, բնականաբար, որսորդության համար էր անհրաժեշտ: X դարի մատենագիր Մասուդին²⁹ բաղենների մասին խոսելիս հիշում է, որ Հայաստանում դրանք սպիտակ են լինում՝ ձյունի առատության պատճառով:

Հայտնի էր նաև Հայաստանի ջորին, որով հատկապես նշանավոր էր Ան-ձևացյաց գավառը: Զորու մասին խոսելիս Իբն Հաուկալը վկայում է. «Ձառու-

²⁵ BGA, V, 296.

²⁶ Ս. Նրեմյան, Հայաստանը ըստ Աշխարհացույցի, Երևան, 1963, 98:

²⁷ Իբն ալ-Ասիր, Կահիրե, 1357 (1938—39), Դ, 28:

²⁸ Opus Geographicum auctore Ibn Haukal. Lugd. Bat., 1938, II, 346.

²⁹ Մասուդի, Մուրուջ, Կահիրե, 1948, էջ 187:

ղանից և Հայաստանի ու Առանի այլ կողմերից Իրաք, Ասորիք, Խորասան և այլուր բերվում են ընտիր ջորիներ, որոնք հայտնի են տոկունությունով, ուժով, ձկունությամբ ու համբերությամբ և որոնց հռչակը ավելորդ է դարձնում այն նկարագրել»³⁰:

Ինչպես տեսնում ենք, հարկացուցակում նշված բոլոր տեսակներն էլ IX—X դարերի արաբ աշխարհագետների մոտ հիշված են և բնական է, որ դրանք բոլորն էլ Հայաստանի տնտեսության մեջ կարևոր տեղ ունենին:

Հստ էություն բնահարկը թեև շատ պակաս էր դրամական հարկի արժեքից, այնուամենայնիվ, բավական մեծ գումար էր կազմում. և կարելի է ասել, որ Աբբասյանների հարկային ցուցակում Արմինիան պատկառելի տեղ ունեւր:

Աշոտ Բաղրատունու իշխանաց իշխան և ապա թագավոր դառնալուց հետո Հայաստանը որոշ ժամանակ դեռ շարունակում էր տարեկան որոշ հարկ վճարել Աբբասյաններին: Իբն Հաուկալի մոտ կա մի հարկացուցակ³¹, որտեղ նշված են Հայաստանի ու Ադվանքի այն իշխանները, որոնք տարեկան որոշ տուրք էին վճարում Ատրպատականի Աալարյաններին: Ամենայն հավանականությամբ, եթե ոչ ամբողջովին, գոնե մասամբ, այստեղ հիշված հարկերը կրկնություն են Աշոտ Ա-ի և Սմբատ Ա-ի օրոք Հայոց թագավորության Աբբասյաններին վճարած հարկերի:

«Ինչ վերաբերում է նրա (Հայաստանի) վիճակին,— գրում է Իբն Հաուկալը,— ինչքան որ ես ծանոթացել եմ նրան, ապա նրա սահմանամերձ տիրակալների վրա դրված տուրքերն ու հարկերը բացահայտում են նրա դրությունը և տալիս են իսկական պատկերը: Թեև [հարկը] երբեմն ավելանում կամ պակասում էր [այնուամենայնիվ] երեք հարյուր քառասուն չորս թվին գանձված տուրքերի միջինը և արդարորեն առնվածը, որը համաձայնեցրել էր Աբու-Կասիմ Յուսուֆ Իբն Աբի-լ-Սաջի գործերի վերակացու Աբու-Կասիմ Ալի Իբն Ջաֆարը Մարզուբան Իբն Մուհամմադի համար, որի վեդիրը դարձավ նա՝ [հետևյալն էր].

Նա (Մարզուբանը) համաձայնեց, որ Մուհամմադ Իբն Ահմադ ալ-Ադդին, Շարվան-Շահի տերն ու թագավորը վճարի հազար հազար դիրհեմ.

Շաքիի տեր Իշխանիկը, որը հայտնի է որպես Աբու Աբդ ալ-Մալիք [նույնպես] համաձայնության եկավ.

Նա (Մարզուբանը) համաձայնեց, որ Սանհարիբը, հայտնի որպես Իբն Սալադա, Ռուբի տերը, վճարի երեք հարյուր հազար դիրհեմ, ինչպես նաև տա ընծաներ.

Ջուրդի տեր Վաշական Իբն Մուսան՝ երկու հարյուր հազար դիրհեմ.

Նա համաձայնեց, որ Աբու-լ-Կասիմ ալ-Վալդուրին Վալդուրի տերը վճարի հիսուն հազար դիրհար և ընծաներ.

Աբու-լ-Հաջա Իբն Ռավվադը, իր Ահր և Վարվուկան տիրություններից՝ հիսուն հազար դիրհար և ընծաներ.

Աբու-լ-Կասիմ ալ-Ջիդանին իր տիրությունների և մնացած [պարտքերի] համար՝ չորս հարյուր հազար դիրհեմ: Սա ձգտեց պակասեցնել և համառորեն խնդրեց, սակայն ի հեճուկս նրա այս արարքի ավելացվեց նրա հարկը՝ երեք

³⁰ Ibn Haukal, II, 346.

³¹ Ibn Haukal, II, 354—355.

V. Minorsky, The Caucasian vassals of marzuban in 344/955, *Caucasica*, IV, BSOAS, 1953, XV/3.

հարյուր հազար դիրհեմ և հարյուր կտոր (نوب) Ռումի դիպակ:

Հարկ դրեց ալ-Դայրանիի որդիներին, ըստ նախկին սլաւմանի, վճարել տարեկան հարյուր հազար դիրհեմ: Սակայն շուրս տարով վճարումից ազատեց ի վարձատրութիւն այն լւանի, որ հանձնել էին Դայսամ Իբն Շադուլային, որն ասպատանել էր նրանց մոտ, իսկ նրանք հանձնեցին ու դավաճանեցին նրան:

Համաձայնեց Սինբաթի որդիների հետ, Ներքին Հայաստանի իրենց տիրութիւններից՝ երկու հազար հազար դիրհեմ, սակայն հետագայում զիջեց երկու հարյուր հազար դիրհեմ:

Համաձայնեց Խաջինի տեր Սանհարիբի հետ՝ հարյուր հազար դիրհեմ և ընծաներ ու անասուններ [տալ] հիսուն հազար դիրհեմ [արժեքով]:

[Այսպիսով] հարկերը՝ ոսկի թե արծաթ, լրացումներով և ընծաներով՝ ինչպէս ջորիներ, զրաստ ու զարդեղեն կազմում էին տաս հազար հազար դիրհեմ: Իսկ ամբողջ Աղարլայջանի, Հայաստանի ու երկու Առանների և նրանց շրջակայքի ու հաստլթի աղբյուրների խարաջը³² հինգ հարյուր հազար դիրհար էր:

Ահա այն բոլորը, որ ես իմացել եմ նրա վիճակի մասին և որի շուրջը փաստեր ու տեղեկութիւններ եմ հավաքել ինչքան որ կարողացել եմ և վերահասու եղել»:

Այս հարկացուցակում հիշված տաս տիրակալներից վեցը Հայոց թագավորութիւնից են: Սմբատի որդիներ արտահայտութիւնը նկատի ունի Սմբատ Ա-ի երկու որդիներին՝ Աշոտին ու Աբասին: Նույն ձևով Դերանիկի (Դայրանի) որդիներ են կոչվում նաև Արծրունիները՝ Աշոտ, Գագիկ և Գուրգեն եղբայրներ: Առաջին հայացքից անորոշ թվացող³³ Սեաւայի որդի Սենեքերիմը (Սանհարիբ Իբն Սավադա) Փոփոստի տեր Հովհաննես Սենեքերիմը պիտի լինի, միայն թե Ռուբ. (رج) տեղանունը մնում է անմեկնելի: Վաչագան որդի Մովսեսի (Վաչագան Իբն Մուսա) ն. Ադոնցի կողմից ճիշտ կերպով նույնացված է Ուտիքի իշխան Մովսեսի որդու հետ³⁴: Հայտնի չէ, թե Վայոց ձորի (Վայցուր) Աբուլ-Կասիմ կոչված իշխանը Սյունյաց Սմբատը, թե Վասակն է: Խաչենի (Խաջին) տեր Սենեքերիմը (Սանհարիբ), դժբախտաբար, չի հիշված հայ մատենագրութեան մեջ:

Այստեղ առաջին հերթին մեզ հետաքրքրողը ոչ թե դրամական հարկն է, որի գումարը Հայաստանի համար երեք միլիոն դիրհեմ (արծաթ դրամ) էր կազմում, այլ բնահարկը՝ ընծաներ (զարդեղեններ և այլն), անասուններ (ջորիներ և այլն), ինչպէս նաև դիպակ, որը թեև վճարում էր հավանաբար Աղվանքի կողմերում իշխող Աբուլ-Կասիմ Զիդանին, այնուամենայնիվ, գուցէ Հայաստանի իշխանների ընծաների մեջ ևս նույնը լինէր:

Սույն հարկացուցակը, թեև ըստ Իբն Հաուկալի կազմված է 955 թ., ամենայն հավանականութեամբ արտացոլում է Աբաս թագավորի ժամանակ (928—953) տիրող դրութիւնը, երբ մասնատված և թուլացած Հայոց թագավորութեան տարբեր մասերը հարկ էին վճարում հարեան Ասորպատականի Սալարյաններին ղեմիկ հրոսակների ասպատակութիւններից զերծ մնալու համար:

³² Հողահարկ կամ ընդհանրապես հարկ:

³³ Minor sky, The Caucasian vassals, p. 522—523.

³⁴ Ն. Ա. Դոնց, Պատմական ուսումնասիրութիւններ, Փարիզ, 1948, էջ 143:

НАТУРАЛЬНАЯ ПОДАТЬ АРМЕНИИ В ЭПОХУ
АРАБСКОГО ВЛАДЫЧЕСТВА

А. Н. ТЕР-ГЕВОНДЯН

Р е з ю м е

В арменоведении единственным источником о натуральной подати Армении при халифате считается историческое сочинение Ибн Халдуна (1332—1406), где дается список налогов Арминии (Армения, Грузия и Аран). Однако у арабского автора X века Джахшиари (ум. в 942 г.) существует тот же самый список с некоторой разницей, которая помогает уточнить сущность видов податей.

Рукопись сочинения Джахшиари была издана Г. Мжигом в 1926 г., однако, по причине неправильного чтения названия «Арминия» (например у Р. Леви), исследователи истории Армении не обратили внимания на этот факт. Этот список податей касается второй половины VIII в. и, особенно, периода Харуна ар-Рашида (786—809). Там не упоминаются те виды податей натурой (напр. пшеница), которые взимались при Омейядах.